ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1329-21.04.2026-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագիծ	Առաջարկվում է նախագծի վերնագրում «փոփոխություններ և լրացումներ բառերը» փոխարինել «լրացումներ և փոփոխություններ» բառերով՝ վերնագիրը նախագծի բովանդակությանը համապատասխանեցնելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածները միավորել մեկ հոդվածում, քանի որ նշված հոդվածներով նախատեսվող փոփոխությունները վերաբերում են օրենքի միայն 6-րդ հոդվածին:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 18.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «մշակույթի ոլորտի» բառերը փոխարնել «մշակութային» բառով՝ համաձայն նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող սահմանմանը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի 18.1-ին հոդվածի 3-րդ մասը խմբագրել այնպես, որ պահպանվի մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով ատեստավորում անցկանող մարմինը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է ուժը կորցրած չճանաչել օրենքի 18.1-ին հոդվածի 4-րդ և 7-րդ մասերը, քանի որ 4-րդ մասով սահմանվում է ատեստավորման	Ընդունվել է	Ընդունվել է

			հանձնաժողով ձևավորող մարմինը, իսկ 7-րդ մասը նախատեսում է կարգավորում ատեստավորման բասացական արդյունքի դեպքում: Առաջարկվում է նաև 18.1-ին հոդվածի 4-րդ և 7-րդ մասերում «մշակույթի ոլորտի» բառերը փոխարինել «մշակութային» բառով՝ համաձայն նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող սահմանմանը:		
6.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածները միավորել մեկ հոդվածում, քանի որ նշված հոդվածներով նախատեսվող փոփոխությունները վերաբերում են օրենքի միայն 18.1-ին հոդվածին:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 6-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում «առաջին մասի» բառերը փոխարինել «1-ին մասի» բառերով, ինչպես նաև նշված հոդվածները միավորել մեկ հոդվածում, քանի որ դրանք վերաբերում են միայն օրենքի 21-րդ հոդվածին:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 9-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածում «երկրորդ մասի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագիծ	Առաջարկվում է օրենքի 18.1-ին հոդվածում նախատեսել դրույթ, որով կսհամանվի այն ստեղծագործական աշխատողների շրջանակը, որոնք ենթակա չեն լինի մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով ատեստավորմանը: Մասնավորապես հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ստեղծագործական աշխատողները կամ տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ստեղծագործական աշխատողները:	Ընդունվել է	Ընդունվել է